ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

«11» սեպտեմբերի 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ԳԲԽ-34/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի 26.08.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1.«ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 26.08.2015թ. ներկայացրած բողոքով «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետն նաև՝ Պատվիրատու) կողմից այլուրի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-7/55» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝

Ընթացակարգ) 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող մասնակից:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է լրացուցիչ գրություն, որի համաձայն ճշտված հաշվարկների արդյունքում 06.07.2015թ. դրությամբ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի հանդեպ պարտավորություն չունի:

«ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2015թ. որոշմամբ Ընթացակարգի 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժին-ների մասով հաղթող մասնակից ճանաչված «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 52-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

«ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն նշել է, որ Ընկերության կողմից ամբողջությամբ կատարվել է հաղթող մասնակից ճանաչվելու պարտականությունները, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված ոչ լիարժեք տեղեկատվության հետևանքով, որը վերջինիս կողմից շտկվել է, Ընկերությունը չի ճանաչվել հաղթող մասնակից:

Ընկերությունը տեղեկացրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից լրացուցիչ գրությամբ հաստատվում է, որ 06.07.2015թ. դրությամբ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն որևէ պարատավորություն չի ունեցել: «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն գտնում է, որ առկա է բոլոր հիմքերը գնահատող հանձնաժողովի որոշումը վերանայելու և «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն խնդրել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլուրի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-7/55» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. հուլիսի 28-ի որոշումը դադարեցնել (չեղյալ հայտարարել) և «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ին Ընթացակարգի թիվ 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հաղթող ճանաչել:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ պաշտպանության նախարարությունը 12.08.2015թ. թիվ ԴՎԱ/1925 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/55» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն 09.09.2015թ. թիվ ԴՎԱ/2132 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար այլուրի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/55» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 47-րդ կետի համաձայն՝ 18.07.2015թ. կատարվել է հարցում՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ընթացակարգի առաջին և հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցների ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Պատվիրատուն նշել է, որ հարցման մասին ՀՀ ֆինանսների նախարարությունից 27.07.2015թ. ստացված եզրակացության համաձայն՝ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն ունեցել է ժամկետանց պարտքեր, ուստի, հայտերի գնահատման արդյունքերի հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ վերջինիս հայտը մերժվել է և գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց

նախաձեռնելու նպատակով մասնակցի տվյալները ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ բացառությամբ Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով գնումների դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը գտնում է, որ անկախ ընթացակարգում զբաղեցրած տեղից, մասնակիցն իրավունք չունի մասնակցել ընթացակարգին, եթե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ: Իսկ հայտերի բացման նիստից 16-18 օր հետո հարկային պարտավորությունների «ճշգրտումը» կամ «զրոյացումը», ՀՀ պաշտպանության նախարարության կարծիքով, հիմք չի կարող հանդիսանալ մասնակցին հաղթող (ընտրված) ճանաչելու համար:

3. <u>ԳԲԽ-34/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-34/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլուրի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-7/55» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***2015թ. հուլիսի 7-ին*** հայտ է ներկայացրել նաև «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ***(07.07.2015թ.)*** չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին 18.07.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի կողմից ***2015թ. հուլիսի 7-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն 2015թ. հուլիսի 7-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ***ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն***՝ 41 027 394 ՀՀ դրամի չափով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.07.2015թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով որոշել է. «Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած եզրակացությունը՝ մերժել «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ Ընկերությունը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.07.2015թ.) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ»:

6. «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն 26.08.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ***2015թ. հուլիսի 6-ի դրությամբ*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ՝ ներկայացնելով ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության գրության պատճենը:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը 31.08.2015թ. թիվ 1/73-1/23622-15 գրությամբ Կենտրոնին է տրամադրել «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի ***07.07.2015թ.*** դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի տարածքային հարկային տեսչության գրությունը, որի համաձայն՝ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի 07.07.2015թ. դրությամբ բյուջեի հանդեպ ժամկետանց պարտավորությունը կազմում է ***27 219 099*** ՀՀ դրամ:

8. Ընկերությունը 04.09.2015թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ***2015թ. հուլիսի 7-ի դրությամբ*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ՝ ներկայացնելով ՀՀ

ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության 03.09.2015թ. փոխադարձ հաշվարկների ակտի պատճենը: Շենգավիթի հարկային տեսչության փոխադարձ հաշվարկների վերոհիշյալ ակտի համաձայն՝ «Ակտի 10 %» հարկատեսակի մասով Ընկերությունը ունի 6186 ՀՀ դրամ ապառք, 43640 ՀՀ դրամ տույժ և 380038 ՀՀ դրամ տուգանք:

9. Կենտրոնը 07.09.2015թ. N 01/04.1/2332-15 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացրել է Շենգավիթի հարկային տեսչության 03.09.2015թ. փոխադարձ հաշվարկների ակտի պատճենը՝ խնդրելով սեղմ ժամկետում հայտնել, թե Ընկերությունը ***07.07.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ, որի վերաբերյալ Կենտրոնը մինչև ԳԲԽ-34/15 բողոքի վերաբերյալ սույն եզրակացության տրամադրման օրը՝ ***11.09.2015թ.***, պատասխան չի ստացել:

4. <u>ԳԲԽ-34/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի 26.08.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, 04.09.2015թ. գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.08.2015թ. թիվ ԴՎԱ/1925 և 09.09.2015թ. թիվ ԴՎԱ/2132 գրություն-ները և կից փաստաթղթերը, ՀՀ ֆինանսների նախարարության 31.08.2015թ. թիվ 1/73-1/23622-15 գրությունը, հայտնում է հետևյալը.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: ***Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝ հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:***

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

Ի պատասխան Պատվիրատուի 18.07.2015թ. հարցմանը՝ ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.07.2015թ.) ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, որի գումարը կազմել է 41 027 394 ՀՀ դրամ:

Այսպիսով, «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը՝ ***2015թ. հուլիսի 7-ի դրությամբ***, ըստ ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության տրամադրված եզրակացության, ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն, ուստի Պատվիրատուն, Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության արդյունքում Ընկերության ներկայացրած հայտարարությունը որակել է իրականությանը չհամապատասխանող և վերջինիս հայտը մերժել է:

Ավելին, ՀՀ ֆինանսների նախարարությունը 31.08.2015թ. թիվ 1/73-1/23622-15 գրությամբ կրկին փաստել է, որ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

Ինչ վերաբերում է Ընկերությունը 04.09.2015թ. գրությամբ Կենտրոնին ներկայացրած ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության 03.09.2015թ. փոխադարձ հաշվարկների ակտի պատճենին, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ ***վերոհիշյալ ակտի համաձայն՝ 07.07.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) «Ակտի 10 %» հարկատեսակի մասով Ընկերությունը ունի 6186 ՀՀ դրամ ապառք, 43640 ՀՀ դրամ տույժ և 380038 ՀՀ դրամ տուգանք***: Ընդ որում, Շենգավիթի հարկային տեսչության 03.09.2015թ. փոխադարձ հաշվարկների ակտի պատճենը Կենտրոնը 07.09.2015թ. թիվ 01/04.1/2332-15 գրությամբ ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով սեղմ ժամկետում հայտնել, թե Ընկերությունը ***07.07.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ, սակայն մինչև սույն եզրակացության տրամադրման օրը՝ ***11.09.2015թ.***, պատասխան չի ստացել:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության արդյունքում Ընկերության ներկայացրած հայտարարությունը որակելով իրականությանը չհամապատասխանող և մերժելով վերջինիս հայտը՝ գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս՝ վարչական մարմիններին

արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները ***վարչական հարաբերություններ չեն*** և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

26.08.2015թ. ներկայացրած բողոքով «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն հայտնել է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի և Կարգի 52-րդ կետի պահանջները:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ նախ, Օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները ***վարչական հարաբերություններ չեն*** և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, ուստի գնումների հետ կապված հարաբերությունների վրա չեն կարող

տարածվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Պատվիրատուի կողմից Կարգի 52-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների ենթադրյալ խախտման կապակցությամբ հայտնում ենք, որ վկայակոչված դրույթները վերաբերում են Կարգի 51-րդ կետով նախատեսված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում սահմանված ժամկետում շտկելու դեպքում հայտը բավարար գնահատելուն, իսկ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժելուն: Հետևաբար, Կարգի 52-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները չեն կարող տարածվել ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրված բացասական եզրակացության արդյունքում մասնակցի հայտը մերժելուն, որը կարգավորվում է Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետով, ինչի պահանջները պահպանվել են Պատվիրատուի կողմից:

Բացի այդ, ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, Ընկերությանն Ընթացակարգի հաղթող ճանաչելու որոշում կայացնելու լիազորություն չունի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք մերժել ՀՀ պաշտպանության նախարարություն կողմից այլուրի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-7/55» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. հուլիսի 28-ի որոշումը դադարեցնել (չեղյալ հայտարարել) և «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ին Ընթավակարգի թիվ 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հաղթող ճանաչելու պահանջների վերաբերյալ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի 26.08.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչի ժ/պ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ԳԲԽ-34/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան